ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ (1921թ. 16 ՄԱՐՏԻ - 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ)

1921թ. Փետրվարյան հեղափոխությունը հայ ժողովրդի վերջին ճիգերից մեկն էր իր ճակատագրի տնօրինությունը իր ձեռքը վերցնելու, Հայկական հարցը լուծելու ճանապարհին: Փետրվարյան իրադարձությունները ցույց տվեցին, որ բոլշևիզմը սխալ հաշվարկ էր կատարել: Դավերի ճանապարհով բռնի խորհրդայնացնելով Հայաստանը՝ նրանք անկարող գտնվեցին ոչնչացնելու հայ ազգային գաղափարախոսությունը, մոռացության գիրկը գցելու ազգային գերխնդիր Հայկական հարցը:

Սկսվում էր Հայկական հարցի ամենադավաճանական շրջանը: Հայ ժողովրդի փետրվարյան հաղթանակի օրերին, երբ երկրում վերացել էր բոլշևիկյան վարչակարգը, Մոսկվայում տեղի էին ունենում թուրք-խորհրդային բանակցություններ, որոնց առանցքային խնդիրներից մեկն էլ Հայկական հարցն էր: Այն, որ բոլշևիկները գրամադրված էին վերջնական տեսքի բերել իրենց իսկ տապալած Հայկական խնդիրը, հանրահայտ էր, բայց, քանի որ այդ ամենը կատարվում էին դիվանագիտական չափանիշների խախտումներով, առանձնապես Հայկական հարցում, բանակցություններին տալիս էր անօրինական երկխոսության բնույթ: Սակայն, դա կանխարգելիչ դեր չխաղաց եւ առանց հայ ժողովրդի ներկայացուցիչի մասնակցության, ոտնահարելով հայ ժողովրդի իրավունքները, բանակցությունները ավարտվեցին մարտի 16-ի պայմանագրով, որը միջազգային դիվանագիտության պատմություն մտավ «խայտառակ վաճառք» անունով:

Հայ ժողովուրդը դեռեւս չէր սթափվել Բրեստի պայմանագրի հարվածներից, Բաթումի եւ Ալեքսանդրապոլի պարտադրված պայմանագրերից, պետականության կորստից, բռնի խորհրդայնացման մղձավանջից, երբ նրան պարտադրվեց պատմական հայրենիքից զրկվելու փաստաթուղթը: Քեմալ-Լենին սիրախաղն այս անգամ էլ ոտնահարեց հայ ժողովրդի իրավունքները եւ «մաքսիմալ տերիտորիալ զիջումներ կատարվեցին թուրքերին՝ ի հաշիվ Հայաստանի», պայմանագիրը ուրիշ ոչինչ չէր, քան օրինականացումը «...իմպերիալիզմի դեմ միջազգային հեղափոխության շահերի համար...թուրքերի զավթումը»,- գրում էր Ռ. Բորյանը[1]:

1 **Ռ. Բորյան**, Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը եւ ԽՍՀՄ-ը (ռուսերեն), Մոսկվա, 1929, էջ 285:

Թաքցնելու ոչինչ չկար: Բանակցությունները շարունակվում էին (սկսվել էին 1921թ. փետրվարի 26-ին), երբ մարտի 4-ին լույս տեսավ Ստալինի Սկաչկո ծածկանունով «Հայաստանը եւ Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» հոդվածը, որտեղ երդվյալ հայատյացը Հայաստանին խորհուրդ էր տալիս շարժվել լենինյան սկզբունքներով եւ հանուն համաշխարհային հեղափոխության հաղթանակի հրաժարվել Թուրքիային ներկայացվող հողային պահանջներից, այդ հեղափոխությանը զոհաբերել ոչ միայն դարաձքներ, այլեւ «իրենց ցեղակիցների իմբերին»[2]:

Նույն միտքը Շանթի պատվիրակությանը հաղորդեց Չիչերինի տեղակալ հայազգի Լ. Կարախանը, ասելով .«Եթե վաղը մեր ընդհանուր շարժման շահը պահանջե մեզանից զոհել Անդրկովկասի բովանդակ հայությունը մինչեւ վերջին հայը, մենք կարող ենք ոչ իսկ մեկ վայրկյան դադարում ունենալ այդ զոհողության առաջ[3]:

Հայաստանի պատվիրակությանը թեեւ հրավիրել էին մասնակցելու բանակցություններին եւ Ալ. Բեկզադյանն ու Ս.Տեր-Գաբրիելյանը իրենց հետ տարել էին «Հայաստանը մինչեւ վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» վերնագրով փաստաթղթեր, ակնկալելով, որ դրանք որոշակի դեր կխաղան Հայկական հարցի լուծման գործում, բայց պատվիրակությունը չարժանացավ բանակցություններին մասնակցելու իրավունքին: Հայության փոխարեն նրա պատմական հայրենիքի ճակատագիրը վճռում էին հայակուլ երկու գաղափարախոսությունների՝ պանթուրքիզմի ու «համաշխարհային հեղափոխության» դրոշակակիրները:

Վերեւում բերված Ստալինի եւ Լ.Կարախանի մտքերից կարելի է եզրակացնել, որ եթե Հայաստանում հաղթանակած չլիներ Փետրվարյան հեղափոխությունը, ապա հարցականի տակ էին դրվելու նաեւ Արեւելյան Հայաստանի եւ հայ ժողովրդի գոյությունը: Թերեւս Լենին-Չիչերին համախոհությունը կարողացել էր հաղթող դուրս գալ ապագա բռնապետի հետ մրցավեճում եւ կարեւորություն էին տվել փետրվարյան իրադարձություններին: Ամենայն հավանականությամբ, թուրքական կողմը եւս զգուշացել էր միջազգային կարծիքից, հեռու էր մնացել նոր պահանջներ ներկայացնելուց, քանզի զգում էր, որ բոլշեւիզմը հաստատուն կպահի նախանշված սահմանները, հետագայում եւս հողային պահանջներ չի ներկայացնի, որովհետեւ ռուսական ծավալապաշտությանը երբեք ձեռնտու չէր լինելու դեպի Միջերկրական ծով, կամ «համաշխարհային հեղափոխության» ճանապարհին տեսնել միավորված Հայաստան:

Հայաստանի բոլշեւիկյան վարչակարգը, որը հլու հպատակ էր կենտրոնի դիրքորոշումներին, նշված փաստաթուղթը իր հետ տանում էր բանակցությունների լոկ պատմության առաջ արդարանալու նկատառումով, որովհետեւ համոզված էր, որ երբեք դերակատարում չէր ունենալու վճռելիք խնդիրների հարցում: Նման մտատանջություն ուներ Ալ.Մյասնիկյանը, երբ 1923 թ. զգալով լենինյան ազգային քաղաքականության սկզբունքները, բռնապետի դիրքորոշումները Հայկական հարցում, հայտարարում էր, թե «...անցյալում սխալ է թույլ տրվել, որ արեւմտահայ դատը արեւելահայ ժողովրդի հարցին է միացվել» եւ «իրենք այլեւս իրավասու չէին հետապնդել այդ դատը»[4]:

Թուրք-բոլշեւիկյան բանակցություններն ավարտվեցին բարեկամության եւ եղբայ-

2 **Գ. Լազյան**, Հայաստան եւ հայ դատ, Երեւան, 1991, էջ197-198:
3 «Հայրենիք» ամսագիր, 1954, թիւ 1-5, Հ. Տերտերյանի հուշերը:
4 **Գ. Ահարոնյան,** Մեծ երազի ճամբուն վրայ, Բեյրութ, 1964, էջ 166:

բության մարտի 16-ի պայմանագրով: Հայաստանի Հանրապետությունը, որ 1920 թ. ուներ 61 000 քառ. կմ տարածք, ամփոփվելու էր 29 000 քառ. կմ սահմանների մեջ: Հայաստանը կորցրեց Կարսի մարզը, Սուրմալուի եւ Օլթիի գավառները, Արդահանը, Սարիղամիշը, Կաղզվանը: Պայմանագրով Նախիջեւանը խլվեց ու որպես Աթաթուրքի կալվածք խնամակալության տրվեց Ադրբեջանին: Պայմանագիրը նախապատրաստությունն էր Ղարաբաղը՝ Ադրբեջանին, Ջավախքը՝ Վրաստանին բռնակցելու ծրագրի իրականացման:

Պայմանագրի առաջին հոդվածով, մինչ «կօրինականացվեր» հայկական հողերի վաճառքը, ամրագրվում էր երկու կողմերի համար չափազանց կարեւոր լուծում՝ եղբայր երկրները հայտարարում էին, որ չեն ճանաչում միջազգային որեւէ փաստաթուղթ, որը չի ընդունում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը: Դժվար չէ կռահել, որ խոսքը Սեւրի պայմանագրի մասին էր: Բոլշեւիկ «փրկիչները» ենթարկվելով թուրք ազգայնամոլների կամքին, գրչի մեկ հարվածով ոչնչացնում էին հայության հույսերի ու երազանքների խարիսխ պայմանագիրը:

Պակաս կարեւորություն չուներ նաեւ Նախիջեւանի խնդիրը: Նախիջեւանը համարելով պանթուրքիզմի ծրագրի շքամուտք՝ նրա խնամքը հանձնվում էր եղբայր Ադրբեջանին, պայմանով, որ «Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»: Երրորդ պետությունը, բնական է, որ Հայաստանն էր: Թուրք հայակերները այդ հոդվածով կապում էին նաեւ բոլշեւիկների ձեռքերը, որպեսզի վերջիններս, հետագայում, իրենց անկանխատեսելի քաղաքականության արդյունքում, եթե փորձեին անգամ վերականգնել պատմական ճշմարտությունը, գերծ մնային Քեմալ Աթաթուրքի կալվածքի նկատմամբ վճիռներ կայացնելուց: Ռուսաստանի բոլշեւիկյան վարչակարգը ոչ միայն հավատարիմ մնաց պայմանագրի 3-րդ հոդվածը չխախտելու խոստումին, այլեւ թույլ տվեց, որ Ադրբեջանը Քեմալի տնամերձը համարվող հայկական երկրամասին հետագայում, խախտելով պայմանագրի ելակետը, կազմավորի ինքնավար հանրապետություն եւ այն համարի իր անբաժանելի մասը:

Ութերորդ հոդվածով կողմերը պարտավորվում էին պայքարել այն ուժերի դեմ, որոնք կփորձեին կառավարության դեր ստանձնել այն տարածքներում, որոնք նվիրվում էին Թուրքիային: Բնական է, որ խոսքը Արեւմտյան Հայաստանի մասին էր: Եթե հրաշքով, մի- ջազգային որեւէ պայմանագրով, հայության պատմական հայրենիքին տրվեր ինքնավարություն, կամ փորձ արվեր այնտեղ ստեղծել ազգային օջախ, ապա եղբայր երկրները ոչ միայն չէին ընդունելու այդ գաղափարը, այլեւ ոչնչացնելու էին ինչպես պայմանագիրը, այնպես էլ այն իրագործել պահանջող խմբերին: Ահազանգը ուղղված էր ազգային կուսակցությունների եւ հատկապես ՀՅԴ կուսակցության դեմ: Ցուցաբերելով մեծ «մարդասիրություն» եւ ցանկանալով ընդմիշտ ազատվել Արեւմտյան Հայաստանում մնացած հայության բեկորներից, 12-րդ հոդվածը այդ բնակիչներին իրավունք էր վերապահում «իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով» ազատ հեռանալ Թուրքիայից: Նպատակը պարզ էր, Թուրքիան ցանկանում էր Արեւմտյան Հայաստանում մաքրել հայության հետքերը, վերացնել ապացույցները, օրինակացնելով հայության պատմական հայրենիքի զավթումը:

Բոլշեւիկյան կողմը անսահման հոգատարություն դրսեւորելով դաշնակցի նկատմամբ, պարտավորվում էր ստիպել՝ «հնարավոր կարճ ժամանակամիջոցում», զոհասեղանին մո-

փեցնել հայությունը ներկայացնող բոլշեւիկյան Հայաստանի կառավարությանը, որպեսզի մի առանձին պայմանագրով վավերացվի կողոպուտ հանդիսացող պայմանագիրը (հոդ.15,16):

Այդպես էլ կատարվեց: 1921թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում, Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մռավյանը ստորագրեց հայրենիքի վաճառքի պայմանագիրը: Դա բոլշեւիկյան Հայաստանի՝ Հայկական հարցի հետ կապված առաջին եւ, բարեբախտաբար, վերջին ստորագրված ստրկամիտ պայմանագիրն էր: Հետաքրքրական է, որ «բանակցությունների» ընթացքում, ամենայն հավանականությամբ պատմության համար, բոլշեւիկյան Ռուսաստանի ներկայացուցիչ Գանեցկին ցուցաբերելով «անթաքույց» հայասիրություն, փորձում էր թուրքական կողմի մոտ գութ առաջացնել, Հայաստանին զիջելու, որպես «զգացմունքային կարեւորություն» Անիի ավերակները: Թուրքերը, իհարկե, զուրկ չէին «զգացմունքներից», բայց, քանի որ գլխավորը հայության հուշերը ոչնչացնելն էր, ոչ թե պատմական հայրենիքի նկատմամբ վկայությունների պահպանումը, կտրականապես մերժեցին առաջարկը: Դիվանագիտական այդ ցուցադրական ելույթի հեղինակին ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ հայտարարել, որ մերժումը ցավալի հիշողություն է դառնալու:

Թուրք-բոլշեւիկյան համագործակցությունը բազմաչարչար հայ ժողովրդին մատուցեց դարի ամենամեծ դավը, Հայկական հարցի հերթական բզկտումը, որը այդուհետ, իր վիրավոր կեցվածքով դառնալու էր թուրք-խորհրդային հետագա հակամարտության դամոկլյան սուրը, որը կոմունիստական վարչակարգը հանելու էր պատյանից միմիայն այն ժամանակ, երբ անհրաժեշտություն էր դառնում Թուրքիային զսպաշապիկ հագցնելը[5]:

Հայկական հարցը ոչնչացնելու բոլշեւիկյան գործընթացը, որ սկսվել էր Բրեստի պայմանագրով, չէր բավարարվելու մարտի 16-ի ուրացությամբ: Հայկական հարցին դեռեւս սպասվում էին նոր փորձություններ, տարածքային նոր կորուստներ: Թուրք-բոլշեւիկյան վերջին պայմանագիրը լրացումներ էր պահանջում: Դաշնակից Թուրքիայի «համաշխարհային հեղափոխությանը» նվիրվածությունը ավելի ոգեւորելու նպատակով, սկսվեց Արեւելյան Հայաստանի տարածքների աճուրդ-վաճառքը:

5 Նախորդ էջերում ներկայացված հոդվածները տե՛ս **Բ. Բորյան**, անդ, էջ 500-504: